# ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ Բնապահպանության նախարարության
Կենսառեսուրսների  կառավարման գործակալության
կենդանական ռեսուրսների կառավարման բաժնի պետի տեղակալ
կենսաբ.գիտ.թեկնածու

Միխաիլ Ոսկանով
2006թ.

| N | Միջոցառումները |
|---|---|
| 1 | Սկսված է կենսառեսուրսների գործակալության ենթակայության տակ գտնվող Բնության հատուկ պահպանվող տարածքներում /ԲՀՊՏ/, դենդրոպարկերում և Ջրվեժի անտառպարկում բուսական և կենդանական  աշխարհի օբյեկտների հաշվառման և գույքագրման աշխատանքների իրականացումը, որը հիմք կծառայի  տվյալների բազայի  ստեղծմանը |
| 2 | Հայաստանի բուսական և կենդանական աշխարհի օգտագործման ենթակա օբյեկտների ցանկի  մշակում |
| 3 | Բուսական և կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման թույլատրելի չափաքանակների հիմնավորում |
| 4 | Սիրողական որսի օբյեկտ հանդիսացող կենդանական ռեսուրսների որոշման աշխատանքների կազմակերպում և որսակենդանիների թույլատրելի չափաքանակների հիմնավորում |
| 5 | Բուսական և կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման, արտահանման և ներմուծման համար թույլտվությունների /լիցենզիաների/ ձևակերպում և պայմանագրերի կնքում |
| 6 | Էկոհամակարգերի և ԲՀՊՏ-երի վիճակի գնահատում |
| 7 | Հանրապետական բնապահպանական պետական տեսչության հետ բուսական և կենդական աշխարհի օբյեկտների և ԲՀՊՏ-երի պահպանության միջոցառումների համատեղ կազմակերպում ու իրականացում |
| 8 | ՙՍևան՚ ազգային պարկում աբորիգեն ձկնատեսակների (կողակ և իշխան) պահպանության և վերարտադրության աշխատանքների կազմակերպում |
| 9 | Սևանա լճի ջրի մակարդակի բարձրացման  հետևանքով  ջրի տակ մնացող անտառածակ տարածքների ծառաթփային բույսերի հեռացման աշխատանքների համակարգում |
| 10 | Սևանա լճում սիգ ձկան ու խեցգետնի պաշարների որոշման աշխատանքների համակարգում |
| 11 | ՙՍևան՚ ազգային պարկ, ՙԴիլիջան՚ ազգային պարկ՚, ՙԽոսրովի անտառ՚ պետական արգելոց՚, ՙՇիկահող՚ պետական արգելոց՚, ՙԱրգելոցապարկային համալիր՚, ՙԱնտառային գիտափորձարարական կենտրոն՚ և ՙՀայաստանի  բնության թանգարան՚ ՊՈԱԿ-ների գործունեության ապահովման համար պետական բյուջեով նախատեսված ծրագրերի համակարգում |

| | |
|---|---|
| 12 | Բնապահպանական փորձաքննության ենթարկվող նախագծերի վերաբերյալ մասնագիտական եզրակացությունների կազմում |
| 13 | ՙՍևան՚ ԱՊ, ՙԴիլիջան՚ ԱՊ, ՙԽոսրովի անտառ՚ ՊԱ, ՙՇիկահող՚ պետարգելոց ՊԱ, ՙԱրգելոցապարկային համալիր, ՙԱնտառգիտափորձարարական կենտրոն՚ և ՙՀայաստանի բնության թանգարան՚ ՊՈԱԿ-ների գործունեությանն ու զարգացմանն ուղղված ծրագրերի մշակում |
| 14 | Երևանի քաղաքապետարանի և մարզպետարանների հետ շրջակա միջավայրի պահպանության ոլորտում նախատեսված ծրագրերի իրականացում |
| 15 | Գործակալության խնդիրներին առնչվող գիտական և գիտահանրամատչելի հրատարակչական նյութերի պատրաստման կազմակերպում |
| 16 | ՙԽոսրովի անտառ՚ պետական արգելոցի կառավարման պլանի և էկոտուրիզմի երթուղիների մշակման գործընթացի աջակցում և համակարգում |
| 17 | ՙՍևան՚ և ՙԴիլիջան՚ ազգային պարկերի կառավարման պլանների և էկոտուրիզմի ձևերի ու երթուղիների մշակման գործընթացին աջակցում և համակարգում |
| 18 | Համագործակցություն GEF, UNDP, UNEP, FAO, WWF և այլ միջազգային կազմակերպությունների հետ կենսառեսուրսների, այդ թվում գենետիկական ռեսուրսների, ինչպես նաև կենսաբազմազանության և կենսանվտանգության խնդիրներին առնչվող ոլորտներում |
| 19 | Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ եզրակացությունների կազմում |
| 20 | Հատուկ պահպանվող տարածքների զարգացման ծրագրի շրջանակներում հիմնավորվել է 4 նոր ՀՊՏ-ների՝ ՙԽորվիրապ, ՙԳնիշիկ, ՙՋերմուկ՚ և ՙՈրոտան՚ ստեղծում |
| 21 | Բեզոարյան այծի Վրաստանի Բորժոմ-Խարագաուլի ազգային պարկ ռեինտրոդուկցիայի ծրագրի շրջանակներում նախապատրաստվել և իրականացվել է մեթոդական ուղեցույցի և համապատասխան դասընթացների նյութեր, կապված կենդանիների հայթայթման, Հայաստանում պահպանման, Վրաստան տեղափոխման, այնտեղ կլիմայավարժեցման և վայրի բնություն բացթողման գործընթացների հետ |